ԷՋԵՐ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ
(Բանաստեղծը ընտրապայքարի և բանակոիվների
կիզակետում)

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թումանյանն ուներ գրականության պատմաբանի և հրապարակագրի հզոր տաղանդ, մշակութային, գրական ու հասարակական, այդ թվում եկեղեցական ընթացիկ կյանքի խնդիրները զարմանալի ճշգրտությամբ ու խորությամբ գնահատելու, իր ժամանակի ամենասուր ու բախտորոշ հարցերը ազգային ու հանրային շահի տեսանկյունից մեկնելու փայլուն ունակություններ:

*1910 թ. դեկտեմբերի 11-ին վախճանվում է Ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Իզմիրլյանը[1]: Թումանյանն այդ առիթով հրապարակում է մի քանի հոդված՝ «Էջմիածնի ցավը», «Խրիմյան և Իզմիրլյան», «Չպաշտպանեցինք», «Ազնիվ մարդը», «Մեծերից հետո»[2]: Թիֆլիս հասած լուրերի համաձայն՝ Հայրապետի մահը արագացրել էր այդ պահին Էջմիածնում իշխող անհամերաշխության մթնոլորտը, Թումանյանի խոսքերով՝ «*Էջմիածնի միաբանության հավիտենական անմիաբանության պատմությունը*»[3]: Բանաստեղծը գրում է. «Արդեն հայտնի էր, որ Վեհի վերջին վրդովմունքը ծանր էր ազդել նրա՝ առանց այն էլ հիվանդ սրտի վրա … հիրավի, թունավորված են եղել հայոց եկեղեցու պետի վերջին օրերը»[4]: Թումանյանը, նկատի ունենալով Իզմիրլյանի վերջին օրերը դառնացնողներին, գրում է. «Եվ չափ ու սահման չեն ճանաչել այդ մարդիկ երբե՛ք, երբե՛ք, երբե՛ք…*

Անձնականը… այն սոսկալի ախտը… հորինում է խելակորույս կռիվ, որի մեջ սպառվում ու չեզոքանում են ամենքի ուժերը, դա ստեղծում է մի խեղդուկ մթնոլորտ, ուր մեռնում են ամեն եռանդ ու ոգևորություն, թունավորվում են ամեն բարի ցանկություններ, խեղդվում են ամեն առաքինություններ»[5]*: Եփրեմ եպիսկոպոսը բանաստեղծին պատմել էր, թե ինչպես թիֆլիսեցի մի քահանա առաջնորդարանում հավաքված բազմության*

---

[1] *Մատթեոս Իզմիրլյանը 1896 թ. աքսորվել էր Երուսաղեմ, որտեղ մնացել էր մինչև 1908 թ.: Աքսորից վերադառնալով՝ նա կրկին նշանակվել էր Կ. Պոլսի պատրիարք՝ փոխարինելով Մաղաքիա Օրմանյանին, իսկ 1909 թ. ընտրվել էր Ամենայն Հայոց կաթողիկոս:*

[2] *Տե՛ս «Հորիզոն» (Թիֆլիս), 12-15, 17, 22. XII. 1910:*

[3] *Թիֆլիս, 1910, Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 6, Երևան, 1994, էջ 267 (այսուհետև՝ տողատակում կնշվի՝ Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հատորը և էջը): Այս և հետագա մեջբերումներում ընդգծումները մերն են –* Ս. Հ.:

[4] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 6, էջ 266:*

[5] *Նույն տեղում, էջ 267:*

առջև, լսելով կաթողիկոսի մահվան լուրը, ասել էր. «Ինն ամիս առաջ պետք է մեռած լիներ»[6]:

Թումանյանը երկար տարիներ բարեկամական հարաբերություններ էր ունեցել Խրիմյան Հայրիկի հետ և քաջ ծանոթ էր նաև Հայրիկի հալածանքներին[7], իսկ Իզմիրլյանին հանդիպել էր մի քանի անգամ: Այդ հանդիպումներից մեկը տեղի էր ունեցել 1910 թ. հունիսի 29-ին: Այդ օրը փոխարքա Վորոնցով-Դաշկովը, Թումանյանը և հունիսի 27-ին Թիֆլիս ժամանած Մատթեոս Իզմիրլյանը պետք է հանդիպեին Մցխեթում: Հանդիպումից հետո կաթողիկոսը խորհրդակցել էր բանաստեղծի հետ ճեմարանի տեսուչի և այլ կադրերի նշանակման հարցում, խնդրել էր նրան՝ իրեն օգնել: Բանաստեղծը, նկատի ունենալով իր հետ համագործակցելու կաթողիկոսի ցանկությունը, Միրական Տիգրանյանին[8] գրում է. «Մյուս անգամ մի երկու հոգով մոտը գնալու խոսք առավ, բայց ես հիվանդացա, էլ չկարողացա գնալ, թեև հարցրել է»[9]:

«Խրիմյան և Իզմիրլյան» հոդվածում Թումանյանը ամենահմուտ հոգեբանի տեսողությամբ, մարդուն ճանաչելու և ներքնաշխարհը թափանցելու բացառիկ ունակությամբ ներկայացնում է երկու մեծ հայերի համեմատական բնութագրերը:

Իզմիրլյանի հետ ունեցած մի քանի հանդիպումներն էլ բանաստեղծի համար միանգամայն բավարար էին ամենայն խորությամբ ճանաչելու նրա բնավորությունը: Գրողը ներկայացնում է նախ այն հատկանիշները, որոնք ընդհանուր էին երկու կաթողիկոսների համար, և որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր հոգևորական գործչի համար. «Երկուսն էլ հոգևորական էին բառի լայն իմաստով, երկուսն էլ սիրում էին ս. Գիրքը ու նվիրված էին հայրենի եկեղեցուն… ատում էին արյունը»[10]*: Սակայն առավել հետաքրքիր են հոգեբանական, թվով 15 այն նրբերանգներն ու տարբերությունները, որոնք նկատել է բանաստեղծը եկեղեցական երկու գործիչների բնավորության մեջ: Ահա դրանցից մի քանիսը.* «Իզմիրլյանը պատկառում ու ճնշվում էր կաթողիկոսական գահից, իսկ Խրիմյանը թեթև աչքով էր նայում գահի վրա…

---

[6] *Նույն տեղում, էջ 273:*

[7] *Հայր Մ. Պոտուրյանը Հայրիկի մահից ամիսներ անց՝ 1908 թ., գրում է. □Խրիմեանի պաշտոնե ի պաշտոն բարձրացումը հակառակորդ վանականներու կիրք հանեց, որոնք … նորեն զրպարտութեան թուղթ մը գրեցին և շատ մը ազգայնոց ստորագրել տուին… Խրիմեան կռապաշտ մկրտեցին, իբրև գող հռչակեցին… ձայն տարածեցին, թե նա ժողովրդեան շահերը վտանգի մեջ կը դնե և Տերութեան հակառակ կը գործե□: Սակայն հայոց Հայրիկի թշնամիները միայն զրպարտելով չեն բավարարվել: Նրանք վճարել են մի քուրդ ավազակի, որ Խրիմյանին սպանի: Սակայն քուրդ ավազակն ավելի մարդկային ու առաքինի է գտնվել, քան նրան վարձած հայ վանականները: Նա անկարող եղավ ձեռք բարձրացնել բարձրաստիճան և ճանաչված հայ հոգևորականի վրա, «անոր ոտքն ինկավ դողդողալով և ներումն խնդրեց» (Մ. Պ ո տ ո ւ ր յ ա ն. Խրիմյան Հայրիկ.– «Բազմավեպ», 1908, թիվ 2, էջ 56), Ս. Կարապետ վանքի վանականները զինված քրդեր են վարձում Հայրիկի մուտքը վանք արգելելու համար: Սակայն հալածանքներն ավելի սիրելի են դարձնում Խրիմյանին ժողովրդի աչքում. «Հակառակությունք և զրպարտությունք չկրցան Խրիմեանի արժանիքը նսեմացնել» (նույն տեղում):*

[8] *Միրական Տիգրանյան – իրավաբան, մանկավարժ, Հայաստանի Հանրապետության կառավարության անդամ (1919 թ.):*

[9] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 10, Երևան, 1999, էջ 93:*

[10] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 6, էջ 268:*

Իզմիրլյանը գահն էր իրենից բարձր նկատում, Խրիմյանը իրեն էր գահից բարձր համարում…

Իզմիրլյանը մարդկանց մոտեցնում էր գործի համար, Խրիմյանը՝ զրույցի:

Իզմիրլյանը սիրում էր խորհուրդ հարցնել, Խրիմյանը վիրավորվում էր, երբ խորհուրդ էին տալիս:

Իզմիրլյանը ազնիվ մարդիկ էր որոնում, Խրիմյանը՝ ջերմ երկրպագուներ:

Իզմիրլյանը պարզ էր ու բաց սիրտ, Խրիմյանը՝ բարդ էր ու խորը:

Իզմիրլյանը դյուրազգաց էր ու հուզվող, Խրիմյանը՝ քամահրող ու հանդարտ:

Իզմիրլյանը օրենքից էր խոսում, Խրիմյանը՝ Ավետարանից:

Իզմիրլյանը սրտալի ու շիտակ գործիչ էր, Խրիմյանը՝ խորամիտ փիլիսոփա:

Իզմիրլյանը անկասկած մաքուր էր, Խրիմյանը՝ անպայման մեծ»[11]:

«Չպաշտպանեցինք» հոդվածում դառնացած Թումանյանն արտահայտում էր Պոլսից եկած հոգևոր գործչի միայնության ցավը Էջմիածնի միջավայրում. «Եկավ մեր երկրին, մեր գործերին, մեր մարդկանց անծանոթ, մեր մեջը պանդուխտ ու մենակ»[12]:

Դեկտեմբերի 12-ից Թումանյանի հիմնական գործը դառնում է կաթողիկոսի հոգեհանգստյան արարողությանը և թաղմանը՝ Թիֆլիսի մտավորականության մասնակցությունն ապահովելը: Դեկտեմբերի 14-ին Թիֆլիսի առաջնորդարանում տեղի է ունենում կազմակերպչական ժողով՝ կաթողիկոսին ըստ արժանվույն մեծարելու և նրան հավուր պատշաճի հրաժեշտ տալու նպատակով: Ելույթ ունեցողների մեջ էր նաև Թումանյանը: Էջմիածին գնալու համար ընտրվում է վեց հոգուց կազմված հանձնաժողով, որի անդամ էր նաև գրողը՝ իբրև «Հորիզոն» լրագրի և «Հասկեր» ամսագրի ներկայացուցիչ: Բացի երկու պարբերականների ներկայացուցիչը լինելուց՝ նա միաժամանակ պետք է կատարեր Հաշտրախանի (Աստրախան) հայ հասարակության խնդրանքը՝ արծաթյա պսակ դնել հանգուցյալի դագաղին[13]:

Դեկտեմբերի 17-ի ցերեկային գնացքով գրողը մեկնում է Էջմիածին, իջևանում Մեսրոպ եպիսկոպոսի հարկի տակ:

«Հորիզոն» օրաթերթի դեկտեմբերի 19-ից 22-ի համարներում տպագրվում են Թումանյանի՝ Թիֆլիս ուղարկած հինգ հեռագիրը, որոնցով քաղաքի հասարակությանը տեղյակ է պահում Էջմիածնի իրադարձություններին[14]: Առաջին հեռագիրը Սանահին կայարանից Թիֆլիս է հասնում դեկտեմբերի 18-ին: Թումանյանը նշում էր, որ Թիֆլիսից ու Բաքվից Էջմիածին են ժամանել 70–80 պատգամավոր, այդ թվում՝ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանը[15]: Թաղման արարողությունը սկսվում

---

[11] *Նույն տեղում, էջ 269:*

[12] *Նույն տեղում, էջ 270:*

[13] *«Հորիզոն», 18. XII. 1910::*

[14] *Նույն տեղում, 19-22. XII. 1910:*

[15] *Ալ. Խատիսյանը ճանապարհին հայկական խմբին է ներկայացրել էքզարխի պաշտոնակատար Գրիգորի եպիսկոպոսին: Էջմիածնի կայարանում վրաց բարձրաստիճան հոգևորականին դիմավորում է միաբանության պատգամավորությունը՝ Մելիք-Թանգյանի առաջնորդությամբ (Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԾ, 10, էջ 110): Կաթողիկոսի հիշատակը հարգելու էին եկել նաև փոխարքայի օգնական սենատոր Վատացիին, գեներալ Լազարևը, Երևանից «Կազիոննայա» պալատի կառավարիչ Լեսնյակը, նահանգապետ Տիզենհաուզենը, Կովկաս ուղարկված Ռուսաստանի ներքին գործերի նախարարության պաշտոնյա Պետրովը, ժանդարմական վարչության գլխավոր գնդապետ Սոլովյովը, պարսկական հյուպատոսը, վրաց ազնվականների ներկայացուցիչներ Սաշկովը, Պետրովը և պաշտոնական այլ անձիք: Այս հյուրերի համար տեղ էր հատկացված վեհարանում:*

է դեկտեմբերի 20-ին առավոտյան ժամը 9-ին: Պատարագը[16] մատուցում է կաթողիկոսական տեղապահ, Վրաստանի և Իմերեթի հայոց թեմի առաջնորդ Գևորգ Սուրենյան արքեպիսկոպոսը:

Թաղման օրը՝ դեկտեմբերի 20-ին, տեղի է ունենում 80 պատգամավորների խորհրդակցություն Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Հ. Խունունցի նախագահությամբ: Ժողովում Կարապետ Տեր-Մկրտչյան եպիսկոպոսի հրաժարականի քննարկմանը մասնակցել է նաև Թումանյանը՝ առաջարկելով ընդունել այն: Բանաստեղծը իր ելույթում անդրադառնում է Մայր աթոռի շուրջ ստեղծված ծանր մթնոլորտին և դատապարտում է Կարապետ եպիսկոպոսի՝ կաթողիկոսի նկատմամբ ունեցած միտումնավոր վերաբերմունքը: Նա չի խնայում նաև Բենիկ և Արտակ եպիսկոպոսներին, որոնք իրենց ելույթներով փորձում էին ապացուցել, թե կաթողիկոսի մահը կապ չունի նրա նկատմամբ եղած որոշ հոգևորականների վատ վերաբերմունքի հետ, և ամեն կերպ ջանում էին արդարացնել Կարապետ եպիսկոպոսին[17]:

Գրողի ելույթին անմիջապես հակադարձում է «Մշակի» խմբագիրը՝ Համբարձում Առաքելյանը՝ ասելով. «…ինչո՞ւ միայն Կարապետին են դատում, ինչո՞ւ Մեսրոպին էլ չեն դատում»[18]: Դրանում պարզորոշ միտում էր դրսևորվում, քանի որ Մեսրոպ եպիսկոպոսը[19] բարեկամական սերտ հարաբերությունների մեջ էր Թումանյանի հետ: Ինչ վերաբերում է Կարապետ եպիսկոպոսին, Թումանյանը նրա հանդեպ անձնական որևէ թշնամանք չուներ: Ավելին, նա էլ Թիֆլիս գալիս հյուրընկալվում էր

Պատգամավորներ կային նաև Բաքվի, Գանձակի և Երևանի մահմեդական ազգաբնակչության կողմից: Մասնակցում էին տարբեր լեզուներով հրատարակվող թերթերի հատուկ թղթակիցներ, որոնք ժամանել էին արարողությունը լուսաբանելու համար: Դեկտեմբերի 17-ին ժամը 3-ին տեղի է ունենում կաթողիկոսի աճյունի տեղափոխումը պատրիարքարանի բնակարանից դեպի տաճար. «Ներկա էին բոլոր պաշտոնավորները՝ պսակներով, բազմաթիվ հասարակություն և բոլոր դպրոցական հիմնարկությունների աշակերտությունը: Երգում էր ճեմարանի երգեցիկ խումբը… Բոլոր ներկա գտնվողների դեմքերի վրա խոշոր վշտի կնիք կա: Կարգապահությունն օրինակելի է: Տեղական զորամասերը շպալեր են կազմել»(Թ ո ւ մ ա ն յ ա ն, ԵԼԺ, 10, էջ 111):

[16] *Վեհափառի անակնկալ մահը խորապես վշտացրեց և նոր հոգսերի առիթ դարձավ նաև Կոմիտասի համար: Կոմիտասը թեպետ «Պատարագը» արդեն ամբողջությամբ գրել էր, սակայն նկատի էր ունեցել տարբեր տարիքի աշակերտների՝ «խառը խմբի» համար: «Ժամանակը շատ կարճ, միայն մեկ շաբաթ. թե՛ պետք է պատարագը գրել աչքերի առաջ ունենալով ձայների քանակն ու որակը, և թե՛ սովորեցնել և հասցնել թաղման պատարագին: Ամբողջ մեկ շաբաթ, օրական 14 ժամ զբաղվելով (6 ժամ տանը պարապում էի, 8 ժամ ճեմարանում ձայն-ձայն պատրաստում և սովորեցնում): Գլուխ հանեցի գործը. այո՛, գլուխ հանեցի, պարզերես ելա, բայց ինձ վրա էժան չնստեց 14 ժամ զբաղմունքը: Թաղումից հետո ամբողջ երեք շաբաթ խելքս գլուխս չեկավ» (տե՛ս Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, 1960, էջ 125):*

[17] *«Հորիզոն», 22. XII. 1910:*

[18] *Թ ո ւ մ ա ն յ ա ն, ԵԼԺ, հ. 6, էջ 279:*

[19] *Էջմիածնի միաբան, բանասեր, Մեսրոպ Տեր-Մովսիսյան (1864-1939) եպիսկոպոսը ժամանակի կրթված և առաջադեմ հոգևորականներից էր՝ օժտված դիվանագիտական ու քաղաքական գործչին բնորոշ ունակություններով: Հրաշալի տիրապետելով օտար լեզուների, հատկապես ռուսերենին՝ հենց նա էր Էջմիածնի պաշտոնական ներկայացուցիչը կառավարության առջև:*

բանաստեղծի տանը, և իրեն համարում էր բանաստեղծի «գրական ջերմ բարեկամներից»: Մեսրոպ եպիսկոպոսը նույնպես գրողի մտերիմներից էր, Թումանյանը խոստանում էր նրան էլ «դատել» նույն անաչառությամբ և մեկի փոխարեն երկու դատապարտող հոդված գրել, եթե հանցավոր է. «Թեև այս րոպեին էլ նրա հյուրն եմ»[20]:

Թումանյանն ամենայն խստությամբ էր տրամադրված բոլոր նրանց հանդեպ, ովքեր չէին խնայել կաթողիկոսին: «Դուք օգտվելով նրա բնավորության ազնվությունից, սրտի քնքշությունից, մոտեցել եք նրան ամենայն կոպտությամբ ու չեք խնայել ոչ մի կերպ և մեզանից էլ զիջում չպիտի սպասեք երբեք»[21],– ասել էր բանաստեղծը: Հավանաբար, հենց այս խոսքերի համար հակառակորդ թերթը («Մշակը») բանաստեղծին մաղձոտ հեգնանքով հռչակեց «պրոկուրոր»:

Կարապետ եպիսկոպոսը կաթողիկոսական գահի թեկնածուներից էր: «Մշակի» և նրա խմբագիր Հ. Առաքելյանի հովանավորչական վերաբերմունքը նրա հանդեպ ի սկզբանե պարզ էր: Սակայն Թումանյանը չի ընկրկում: Նրա համար թանկ էր Իզմիրլյանի հիշատակը: Հայրապետի մասին հոդվածներից մեկը բանաստեղծը վերնագրել էր «Ազնիվ մարդը»: *Այստեղ նա ներկայացնում է Իզմիրլյանին որպես հոգևոր մի հայր, որպես հայրապետ, որպես* «մի մաքուր մարմարյա աշտարակ, մի հզոր պատնեշ աշխարհավեր մրրիկի դեմ կեցած հաստատուն»[22], *որն իր հոգում կրում էր համիդյան հալածանքների ու կոտորածների արյունոտ պատկերը: Բանաստեղծի բնորոշումով Իզմիրլյանը հայ ժողովրդի համար եղել է* ազնիվ քարոզիչ, ազնիվ պատրիարք, ազնիվ մարտնչող, ազնիվ հովվապետ, «մի խոսքով, ազնիվ մարդ… մի հազվագյուտ ազնիվ դեմք»[23]:

Թումանյանի համար ժողովրդական հերոսի հմայք ունեցող եկեղեցական գործիչներից էին նաև Ներսես Վարժապետյանը, Խրիմյան Հայրիկը, Մելիքսեթբեկ Մուրադյանը: Բանաստեղծի խորին համոզմունքով՝ նրանք բոլորն էլ հայրապետական գահին էին արժանացել ոչ այնքան պատգամավորների ընտրությամբ, որքան ողջ ժողովրդի կամքով, որովհետև նրանց հետ միշտ եղել էր «ազգի սիրտն ու սերը»:

Հայոց պետականության բացակայության պայմաններում թե՛ Թումանյանի, թե՛ հայ ազգային հասարակական գործիչների մեծամասնության համար կամա-ակամա եկեղեցու բարձրաստիճան այրերի ընտրությունը դառնում էր չափազանց կարևոր: Ընդ որում, այդ կարևորությունը գիտակցում էին նաև ռուսական իշխանությունները, որոնք միշտ որոշակի ակտիվություն էին դրսևորում տարբեր աստիճանի հայ հոգևոր գործիչների ընտրությունների ժամանակ[24]:

---

[20] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 6, էջ 280:*

[21] *Նույն տեղում, էջ 282:*

[22] *Նույն տեղում, էջ 272:*

[23] *Նույն տեղում:*

[24] *Թումանյանի նամակներից մեկում հիշատակություն կա Թիֆլիսի Բեթղեհեմի եկեղեցու կրտսեր քահանա Աբովյանին՝ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի կնոջ՝ Ելիզավետա Անդրեևնայի միջնորդությամբ ավագություն շնորհելու մասին: Այդ միջամտությամբ տեղի է ունենում անարդարություն քահանա Մեհրաբյանի նկատմամբ (Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 10, էջ 115):*

Թումանյանը չէր կարող իրեն հեռու պահել կաթողիկոսական ընտրություններից նաև այն պատճառով, որ նրա համոզմունքով՝ «Իզմիրլյանի մահով վերջացավ այդ կարող ու ընդհանուրից սիրված հոգևորականների շարքը»[25]*: Բանաստեղծն այլևս չէր տեսնում այնպիսի «հոչակավորների», որոնց* «զահ բարձրանալով՝ ճշմարիտ, որ զահ էր բարձրանում հայ ժողովրդի կամքը, ցանկությունը, սիրած հերոսը, պաշտած մարդը ու կաթողիկոսանում»[26]*:*

Թիֆլիսի մամուլի էջերում պայքարը գնալով թեժանում է[27]*: Թումանյանը մեծ կրքոտությամբ ու եռանդով ղեկավարում է «հորիզոնականների» պայքարը ընդդեմ «Մշակ», «Հովիտ» և «Սուրհանդակ» լրագրերի շուրջ համախմբված գործիչների, որոնց գլխավորում էր Համբարձում Առաքելյանը: Երկու կողմերն էլ հույսեր էին կապում Մայր աթոռ Էջմիածնի հետ՝ հանձին հայ կաթողիկոսության տեսնելով այն միակ հաստատությունը, որն ի զորու էր միջազգային մասշտաբով ներկայացնելու հայ ժողովրդի շահերը:*

Կաթողիկոսական ընտրությունների հետ կապված Թումանյանի բանավիճային առաջին հոդվածը վերնագրված էր «Համբարձում Առաքելյանը և Էջմիածնի վերջին դեպքերը»: Այն պատասխան էր Հ. Առաքելյանի «Կաթողիկոսական մահվան շուրջը» թղթակցությանը[28]*:*

Այս և նույն խնդրին վերաբերող հետագա հոդվածներում Հ. Առաքելյանը կեղծում էր իրողությունը, կողմնակալ ներկայացնում Իզմիրլյանի մահվան հանգամանքներն ու պատգամավորական ժողովները, որոնց մասնակցել էր նաև Թումանյանը: Բանաստեղծը հրապարակավ բացահայտում է Հ. Առաքելյանի և նրա համախոհների կեղծիքները: Գրողի ժամանակակիցներից շատերը խուսափում էին «Մշակի» խմբագրի հետ բանավիճելուց և նույնպիսի խորհուրդ էին տալիս Թումանյանին՝ պատճառաբանելով, որ «ավելի վատ կհայհոյի, ավելի շատ կզրպարտի… ավելի մեծ սուտ կասի»[29]*: Բանաստեղծը նրան բնորոշում է որպես «անհամակրելի հոգի», որն ուզում է վախեցնել և վախեցնելով լռեցնել հակառակորդներին: Թումանյանը գրեթե միակն էր, որ չէր «ահաբեկվում» և համարձակորեն պատասխանում էր, սակայն ոչ Հ. Առաքելյանին համոզելու համար: Նա գիտեր, որ այդ անհնար է, սակայն պատասխանում էր, որպեսզի հանրության մեջ բացասական վերաբերմունք ձևավորեր կեղծիքի ու ստի նկատմամբ. «Մոռանում եմ և այն եմ մտածում, թե ինչպես կարելի է, որ մարդը, այնքան բազմության առջև կատարված դեպքերն ու խոսքերը վեր կենա խեղաթյուրի, ստի, խարդախի ու տա նույն մարդկանց ձեռը՝ առե՛ք, կարդացե՛ք:*

---

[25] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 6, էջ 273:*

[26] *Նույն տեղում:*

[27] *Այդ մասին տե՛ս «Հորիզոն», 22, 28, 29, 30, 31. XII. 1910: Տե՛ս նաև «Հորիզոն», 1911, թիվ 6, 11, 17, 24 և այլն:*

[28] *«Մշակ» (Թիֆլիս), 26. XII. 1910:*

[29] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ 6, էջ 273, 274:*

Ճշմարիտ որ, գոնե ինձ համար սա ավելի մեծ խնդիր է, քան նույնիսկ կաթողիկոսի ընտրությունը: Սա մարդ-արարածի աղավաղումը, այլանդակումը, անկումն է»[30]:

Հ. Առաքելյանի պատասխանը երկար սպասել չի տալիս և «Նամակ խմբագրության» խորագրով հայտնվում է «Մշակում», երբ Թումանյանը դեռ «Հորիզոնում» համարից համար շարունակվող իր հոդվածի վերջակետը չէր դրել[31]:

Հ. Առաքելյանը, չկարողանալով դիմանալ բանաստեղծի սուր գրչին, նաև հանրային կարծիքը շփոթեցնելու ու թյուրիմացության մեջ գցելու նպատակով, միանգամից պահանջում է Իզմիրլյանի մահվան կապակցությամբ իր և Թումանյանի միջև ծագած վեճը հանձնել միջնորդ դատարանին: Թումանյանը հաջորդ օրն իսկ ընդունում է այդ մարտահրավերը՝ արիությամբ ու արժանապատվությամբ՝ իր սուր ու դիպուկ խոսքով պարզապես ոչնչացնելով հակառակորդին. «Ընդունում եմ ինչ տեսակ դատարան կուզեք: Դուք ասել եք ձեր ասելիքը, ես էլ իմը կասեմ, ու թող դատեն: Թող դատաստան լինի, դուք ինքներդ գնացեք անձամբ, իսկ ես, եթե կուզեք, կուղարկեմ միայն իմ գլխարկը. դա էլ բավական կլինի ցույց տալու, որ դուք ստախոս եք ու կեղծող…

Դուք ծաղրում եք շարունակ մարդ-արարածի արժանապատվությունը՝ շարունակ ստելով ու խարդախելով: Դուք վայր եք ձգել տպագրական խոսքի արժեքն ու արժանիքը»[32]:

Հ. Առաքելյանի հետ բանավիճելիս Թումանյանը խնդիրը տեղափոխում էր նաև մարդկային հոգեբանական հասկացությունների դաշտ: Երբ բանավիճող կողմերից մեկն ընտրում է սուտն ու կեղծիքը, փաստերը գլխիվայր շրջելու և իրողությունը խեղաթյուրելու ուղին, փաստարկողի, *տվյալ դեպքում Թումանյանի համար, ծառանում է հանրությանը վերահամոզելու խնդիրը, որը «շատ ավելի դժվար է, քան այսպես կոչված, դատարկ տեղում համոզմունք ստեղծելը»[33]:*

Անշուշտ, տեղի ունեցածի նկատմամբ ի շահ սեփական համոզմունքի հասարակական կարծիք ձևավորելը Թումանյանին միշտ էլ հաջողվել է: Դրա պատճառներից էին թե՛ բանաստեղծի կողմից խոսքի մշակույթի արվեստին քաջահմուտ լինելը և թե՛ այն, որ ճշմարտությունը միշտ նրա կողմն էր: Պակաս կարևոր չէր նաև հոգեբանական գործոնի՝ Թումանյանի հեղինակության դերը: Հենց այս վերջին հանգամանքն էր, որ երբեք հանգիստ չի տվել բանաստեղծի հակառակորդներից շատերին, այդ թվում, առաջին հերթին, Հ. Առաքելյանին: Դեռ երկար տարիներ պիտի անցնեն, մինչև նա մեղայականով ներկայանա բանաստեղծի դատին ու իր խիղճը հանգստացնելու համար ներում հայցի: Նրանց միջև ծավալված յուրաքանչյուր պայքար երկու կողմից էլ եղել է թեժ ու անզիջում: Թումանյան-փաստարկողին բնորոշ էր ներքին համոզվածությունը: «Կրկնում եմ,–

---

[30] *Նույն տեղում, էջ 274:*

[31] *Թումանյանի հոդվածը տպագրվել է «Հորիզոնի», 28, 29 և 31. XII. 1910, իսկ Հ. Առաքելյանի պատասխանը տե՛ս «Մշակ» 29. XII. 1910:*

[32] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, 6, էջ 284:*

[33] *Գ. Ա. Բ ր ո ւ տ յ ա ն. Իմաստասիրական երկխոսություններ, Երևան, 1975, էջ 512:*

գրում է Թումանյանը,– ընդունում եմ միջնորդ դատարանը հենց նույն մարդկանցից, որ դուք եք անվանել: Համեցե՛ք: Իսկ մինչև միջնորդ դատարանը պիտի լսեք ճշմարտությունը…

ճշմարտություն – ահա ձեր մահը»[34]:

Հ. Առաքելյանը չէր խորշում Թումանյանի դեմ գործածել նաև քաղաքական զենք: *Նա հրաշալի տեղեկացված էր «Դաշնակցական գործին» և իբրև «Մշակի» խմբագիր՝ մերթընդմերթ լուսաբանում էր այն թերթի էջերում: Այդ գործի հետ ոչ մի առնչություն չունեցող կաթողիկոսական խնդրի շուրջ Թումանյանի հետ բանավիճելիս նա իշխանություններին հիշեցնում է իր ընդդիմախոսի՝ պայմանական ազատության մեջ լինելը: Եկեղեցական խնդիրների հետ որևէ հեռավոր աղերս չունեցող այս «հիշեցումը» յուրովի մի ահազանգ էր ոստիկանությանը՝ բանաստեղծին տեսադաշտից դուրս չթողնելու նպատակով, միաժամանակ թիկունքից հարված էր հակառակորդին: «Բայց դուք մի կեղտոտ ձի ունեք, որ շատ եք սիրում հեծնել ու քշել այս ու այն կողմը: Այդ դաշնակցության գործն է,– գրում է Թումանյանը:– Այդ գործը, պարո՛ն, արդեն դատարանումն է: Ով կմեղադրվի, ով կարդարանա, այդ ապագան ցույց կտա: Բայց դա ի՞նչ կապ ունի Կարապետ եպիսկոպոսի գործի և ձեր ստախոսության հետ»[35]:*

Թեև Հ. Առաքելյանը հմուտ ճարտասան էր, սակայն Թումանյանի հետ բանավիճելիս միշտ կորցնում էր հավասարակշռությունը: Հ. Առաքելյանը հունվարի 15-ին ասում է իր «վերջին» խոսքը՝ պահանջելով միջնորդ դատարան ու դատավորներ է առաջարկում Հովհաննես Սպենդիարյանին, Ավետիք Եզեկյանին և Հարություն Գասպարյանին[36]:

Մինչ այդ՝ հունվարի 12-ին, Թումանյանը «Հորիզոնում» դիմել էր «Մշակի» խմբագրությանը՝ վերջնագիր հիշեցնող նամակով. «Դուք խուսափում եք մեր հարցին ուղղակի պատասխանելուց… շատ լավ:

Ուրեմն միջնորդ դատարանի առարկա է լինելու և այս խնդիրը:

Ընդհատելով իմ հոդվածները Հ. Առաքելյանի դեմ, առաջարկում եմ անցնել միջնորդ դատարանին: Թիֆլիսում են էջմիածնի պատգամավորական ժողովի նախագահ Հ. Խունունցը, Թիֆլիսի քաղաքագլուխ Խատիսյանը, հենց «Մշակի» աշխատակից բժ. Վ. Արծրունին… Թող Թիֆլիսում գտնվող պատգամավորները հավաքվեն ու տեսնեն այս ամոթալի դատը: Բավական է մամուլը դարձնել ստախոսության ասպարեզ: Վերջ պետք է լինի դրան»[37]:

Թումանյանն էլ իր կողմից միջնորդ դատարանի դատավորներ է առաջարկում պպ. Հ. Ամիրխանյանին, Գ. Մելիք-Ղարագյոզյանին և Ա. Պապովյանին: Բանաստեղծը որպես վկա հրավիրում է էջմիածնի խորհրդակցությանը մասնակցած բոլոր պատգամավորներին: Նա կոչ է անում դատավորներին, որ խուսափեն վեճին մասնավոր, անձնական բնույթ տալուց,

---

[34] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, 6, էջ 285:*

[35] *Նույն տեղում, էջ 284:*

[36] *Հ. Ա ռ ա ք ե լ յ ա ն. Իմ վերջին պատասխանը.– «Մշակ», 15. I. 1911:*

[37] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, 6, էջ 288:*

ինչպես նաև «անողոք լինեն» հանցավորի նկատմամբ՝ «ես կլինեմ, թե Համբարձում Առաքելյանը»[38]:

Հ. Առաքելյանը, սակայն, մի կողմ է դնում միջնորդ դատարան հրավիրելու իր պահանջը, քաջ գիտակցելով, որ այն իր համար որևէ դրական արդյունքի չի հանգեցնի, հետևաբար դատը տեղի չի ունենում: Այսպիսով՝ նրա «մարտահրավերը» էժանագին շանտաժ էր և հակառակորդին վախեցնելով լռեցնելու միջոց:

Թումանյանը հաճախ էր շարժում միջակությունների մաղձն ու նախանձը, նրանց մեջ անլիարժեքության բարդույթ արթնացնելով: Շատերն են ձգտել ստվեր ձգել նրա վրա, ցավ պատճառել, կարծես վրեժխնդիր լինելով իրենց կարողությունների սահմանափակության համար: Դրա վկայությունն է այն, որ բանավեճը Հ. Առաքելյանի համար առիթ էր բանաստեղծին վնասելու և իշխանություններին լրացուցիչ անգամ հիշեցնելու բանաստեղծի «անբարեհույս քաղաքացի» լինելը: Հ. Առաքելյանն անդրադառնում է նաև գրողի գեղարվեստական ժառանգությանը և նրան տալիս է «երբեմն բանաստեղծ» բնորոշումը: Գրողը պատասխանում է. «Գուցե Հ. Առաքելյանը ճշմարիտ է ասում, որ ես «երբեմն» էի բանաստեղծ… ճշմարիտ, այն ծանր օդում, ուր շնչում են հ.առաքելյաններ – բանաստեղծությունը չի կարող շնչել ու ապրել»[39]:

Մինչ կաթողիկոսական ընտրությունները հայ պարբերական մամուլը մեծ ծավալի նախապատրաստական աշխատանք էր կատարում՝ լուսաբանելով այս կամ այն առաջադրվելիք թեկնածուի գործունեությունը: Անշուշտ, «Հորիզոնը» չէր կարող բացառություն կազմել: Թումանյանը ինքը երկար ժամանակ չէր կարողանում կողմնորոշվել, թե հատկապես որ եկեղեցական գործչին է արժանի համարում հայրապետական գահին: «Կաթողիկոսական ընտրելիները» հոդվածից պարզվում է, որ շրջանառվում էին Եղիշե Դուրյանի, Մաղաքիա Օրմանյանի, Կարապետ Տեր-Մկրտչյանի, Գևորգ Սուրենյանի, Սուքիաս Պարզյանի, Մեսրոպ Տեր-Մովսիսյանի և բարձրաստիճան այլ հոգևորականների անուններ: Թումանյանը առաջարկում է ընդարձակ հոդվածներով հանրությանը ներկայացնել թեկնածու բոլոր եպիսկոպոսներին, մանավանդ ուշադրությունը կենտրոնացնել հասարակությանն ավելի պակաս հայտնի ու երիտասարդ հոգևորականներին:

Գրող-հրապարակախոսը նկատի ուներ հատկապես Էջմիածնի սինոդի անդամ Մեսրոպ Տեր-Մովսիսյանին, Ատրպատականի առաջնորդությունը ղեկավարող Կարապետ Տեր-Մկրտչյանին, արևմտահայության կողմից առաջադրված Եղիշե Դուրյան սրբազանին և երիտասարդ Խորեն Մուրադբեգյանին[40]: Հետաքրքիր է, որ Թումանյանը, լինելով «Հորիզոնի» փաստացի խմբագիրը, թույլ է տալիս, որ խմբագրության անունից իր հոդվածի տողատակում դրվի հետևյալ ծանոթությունը. «Այս հոդվածը անհատական կարծիքի արտահայտություն է»[41]:

---

[38] *Նույն տեղում, էջ 289:*

[39] *Նույն տեղում:*

[40] *Նույն տեղում:*

[41] *«Հորիզոն», 11. IX. 1911:*

Խմբագրության աշխատակիցները համաձայն չէին խմբագրի հետ. նրանք արդեն կողմնորոշվել էին և պաշտպանում էին Գևորգ Սուրենյանցի թեկնածությունը, հետևաբար, ավելորդ էին համարում մնացած թեկնածուների պրոպագանդումը: Թումանյանը թույլ է տալիս, որ այդ տարակարծությունը հրապարակվի իր խմբագրած լրագրում, կասկածի տակ առնվեն իր իսկ մտքերն ու կարծիքը խնդրի շուրջ: Սակայն այստեղ գլխավորը ոչ թե տարակարծության հիմքերն էին, այլ Թումանյանի՝ իբրև խմբագրի, իբրև ղեկավարի ժողովրդավարական մոտեցումները: Այնուամենայնիվ, բանաստեղծը հոգու խորքում իրեն վիրավորված է զգացել: 1918 թ. նա խոստովանում է, որ ինչպես այլ պարբերականներում, այնպես էլ «Հորիզոնում» իր հոդվածների տակ □ծանոթություններ են դրել և կարող են դնել»[42]*:*

Պատգամավորներ առաջադրող պատվիրակների ընտրությունը նշանակված էր 1911 թ. հոկտեմբերի 9-ին[43]*: Էջմիածնից Կ. Պոլիս պատրիարքի տեղապահ Վահրամ Մանկունուն է ուղարկվում 50–60 հոգուց կազմված «չեզոք», անկուսակցական և նշանավոր մարդկանց մի ցուցակ, որոնք պետք է քվեարկեին արևմտահայության անունից: Ցուցակը գլխավորում էր Հովհաննես Թումանյանը և բարձր վարկանիշ ունեցող «Հորիզոնի» մյուս աշխատակիցները: Այնտեղ կար Լեոյի և նույնիսկ արդեն մահացած Ղազարոս Աղայանի անունը: Զգալի թիվ էին կազմում դաշնակցական գործիչների անունները: Ինչպես պարզվում է հետագայում, պատրիարքի առաջարկով այդ ցուցակն ուղարկել էր Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցը, սակայն խնդրել էր իր անունը գաղտնի պահել*[44]*: Եվ քանի որ Մանկունին հակված էր Գևորգ արքեպիսկոպոսին տեսնել կաթողիկոսի գահին, նա այդ «գաղտնիքը» պահում էր:*

«Մշակը» և «Հորիզոնը» ինչպես գրեթե բոլոր հարցերում, այնպես էլ կաթողիկոսական ընտրությունների շուրջ ունեին ծայրաբևեռային մոտեցումներ: «Հորիզոնի», բայց ոչ Թումանյանի թեկնածուն Գևորգ Սուրենյանցն էր, իսկ «Մշակը» պաշտպանում էր Մաղաքիա Օրմանյան արքեպիսկոպոսին: Եվ ահա, Հ. Առաքելյանը 1911 թ. սեպտեմբերին Պոլսում տեսնում է վերոհիշյալ ցուցակը գլխավորող անձանց անունները, և եզրակացնում, որ «Հորիզոնը» Թումանյանի գլխավորությամբ դավադրություն է կազմակերպել և ցանկանում է յուրացնել նաև արևմտահայության ձայները[45]*: Երբ մամուլում սկսում են տգեղ որակումներով հոլովել բանաստեղծի անունը, վերջինս սեպտեմբերի 22-ին Կ. Պոլսի պատրիարքարանի*

---

[42] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995, էջ 486:*

[43] *«Հորիզոն», 29. IX. 1911: Այդ ընտրությունները հոկտեմբերի 9-ին չեն կայանում, քանի որ ծխականների պահանջված թվով ներկայությունը չի ապահովվում: Հաջորդ ժողովը տեղի է ունենում հոկտեմբերի 16-ին: Երկրորդ անգամ ծխականների թվի սակավությունը ձգձգման պատճառ չէր կարող լինել: Կաթողիկոսական ընտրություններին ժողովուրդը մասնակցում էր անուղղակի: Նախ նա ընտրում է պատվիրակներ, որոնք իրենց հերթին ընտրում են պատգամավորներ, վերջիններս էլ արդեն գաղտնի քվեարկությամբ ընտրում են կաթողիկոսին:*

[44] *Գևորգ Սուրենյանը «Սուրհանդակ» օրաթերթում հերքել էր ցուցակի հետ կապված մեծ բանավեճի ընթացքում իր դեմ հարուցված մեղադրանքը՝ հայտարարելով, թե տեղյակ չէ Մանկունուն ուղարկված ցուցակից (տե՛ս «Սուրհանդակ» (Թիֆլիս), 19. V. 1911):*

[45] *Այդ մասին ավելի հանգամանորեն տե՛ս Լ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը, Երևան, 1992, էջ 74-95:*

դիվանատուն՝ Վահրամ Մանկունուն գրում է. «Խոնարհաբար խնդրում եմ իմ անունը հանեք այդ ցուցակից, քանզի ոչ ոք այդ մասին չէ հարցրած իմ կամքը, և չեմ տված համաձայնությունը ումնիցե: Չգիտեմ՝ ո՞վ է կազմել ու ղրկել այդ ցուցակը և ընտրվելու դեպքում էլ հրաժարվելու եմ արդեն»[46]:

Թումանյանը չուներ նախընտրած որևէ թեկնածու: Նա պարզապես ցանկություն ուներ իր լրագրի էջերում հավասար պայմաններ ապահովել բոլոր թեկնածուների համար: Հ. Առաքելյանը գրողին մեղադրում էր երկերեսանիության մեջ, իբր, նա մի կողմից պաշտպանում է Գևորգ Սուրենյանցի թեկնածությունը, մյուս կողմից պրոպագանդում է Եղիշե Դուրյանի և Խորեն Մուրադբեգյանի գործունեությունը՝ դրսևորելով «խլուրդային» վարքագիծ: «Խաթաբալա» երգիծական շաբաթաթերթը ֆելիետոն է տպագրում երկու կողմերի՝ «Հորիզոնի» և «Մշակի», Թումանյանի և Առաքելյանի բուռն պայքարի մասին[47]:

«Հորիզոնում» տպագրված «Մի նոր խարդախություն» անստորագիր հոդվածը, որի հեղինակը Թումանյանն էր, դատապարտում է «Մշակի» հերթական կեղծիքը, պահանջում է հրապարակել ցուցակը կազմողի անունը և դիմում է Հ. Առաքելյանին՝ վերջինիս իսկ բնորոշումով. «Խլուրդային գործունեությունը» ընտրողական գործերի մեջ ձեր և միայն ձեր անկողոպտելի սեփականությունն է»[48]: Հ. Առաքելյանը «էտիկետի» դեմ է համարում ցուցակը կազմողի անունը հրապարակելը: Թումանյանը պատասխանում է. «Նա միշտ ճշմարտությունն ասելու անընդունակություն ունի, և այդ համարում է և «էտիկետի» դեմ»[49]:

«Հորիզոնի» սեպտեմբերի 24-ի առաջնորդողում Հ. Առաքելյանը բնորոշվում է «հոչակավոր ստախոս», «հին լարախաղաց»[50]: Իսկ հոկտեմբերի 5-ի հոդվածը Թումանյանը վերնագրում է «Մեծ մոլորեցնողը և ծանր հանցավորը»՝ այս անգամ նկատի ունենալով Ե. Տեր-Մինասյանին[51]: Վերջինս պաշտպանում էր Կարապետ եպիսկոպոսին և դեմ էր հատկապես Մեսրոպ եպիսկոպոսի թեկնածությանը: Թումանյանը դարձյալ գրիչ է վերցնում ոչ թե որևէ թեկնածուի պաշտպանելու, այլ կեղծիքներն ու զրպարտությունները պարզելու և ցանկացած գնով սեփական թեկնածուին առաջ մղելու մտայնությունը դատապարտելու համար: «Ես այլևս կաթողիկոսական ընտրության մասին չեմ մտածում,– գրում է բանաստեղծը՝ հայտարարելով, որ իրեն վշտացնում է միայն այն,– որ լավ մարդիկ չեն երևում մեր կյանքում կամ շատ քիչ են երևում, իսկ վատերը՝ շատ: Եվ շատ են ոչ միայն խավար, գռեհիկ բազմության մեջ, այլև լուսավորված,

---

[46] Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, 10, էջ 126:

[47] «Խաթաբալա», 1911, թիվ 42:

[48] Թումանյան, ԵԼԺ, հ. 8, Երևան, 1999, էջ 474–475:

[49] Նույն տեղում, էջ 476:

[50] Նույն տեղում, էջ 477:

[51] Երվանդ Գալուստի Տեր-Մինասյան (1879–1974) – եկեղեցու պատմաբան, բանասեր և բառարանագիր, Էջմիածնի նախկին միաբան, ուսանել էր Եվրոպայում՝ Լայպցիգի և Բեռլինի համալսարաններում, Գևորգյան ճեմարանի ուսուցիչ, Էջմիածնի տպարանի տնօրեն: 1910 թ. նա արդեն հրաժարվել էր հոգևոր կոչումից:

ինտելիգենտ շրջաններում …խաբում են լսողներին, մոլորեցնում են անաստված կերպով»[52]*:*

Ցանկացած բանավեճում Թումանյանը կարևորում է ոչ այնքան խնդրո առարկան, թեր կամ դեմ, նույնիսկ արդար կամ անարդար, ճիշտ կամ սխալ լինելը, որքան բանավեճը մղողի մարդկային նկարագիրը և նախընտրած միջոցները: Եթե բանավիճող կողմն անազնվությունն է ընտրում իբրև հաղթանակի հասնելու միակ ճանապարհ, ապա նա «տապալում ու խորտակում» է ոչ թե հակառակորդին, այլ «հավատը մարդկանց մեջ, հավատը դեպի մարդն ու մարդու ազնիվ խոսքը: Եվ այս հազար անգամ ավելի լուրջ խնդիր է, քան թե ամեն մի կաթողիկոսական խնդիր» [53] *:*

Ե. Տեր-Մինասյանին Թումանյանն անվանում է «մեծ մոլորեցնող ու ծանր հանցավոր», որը դարձյալ հորիզոնականներին տված հակառակորդի բնորոշումն էր: Իրական մոլորեցնողները, ըստ բանաստեղծի, բոլոր նրանք են, ովքեր առաջ են քաշում, գովերգում ու փառաբանում են ոչ թե արժանավորին, այլ «կուսակցական մարդուն»՝ հաշվի չառնելով անգամ նրա վարկաբեկված լինելը[54]*:*

Պետք է նկատել, որ բանաստեղծը խորապես հարգում էր իր այս ընդդիմախոսին և նրան համարում էր «զարգացած ու հասկացող մարդ»[55]*: Սակայն այս դեպքում էլ, ինչպես միշտ, նրան անհանգստացնողը հարցի բարոյական կողմն էր, ցանկացած ընտրություններին ուղեկցող շահագրգիռ որոշ ուժերի պայքարի տգեղ եղանակը, անաչառ մոտեցումների գրեթե բացակայությունը, որևէ թեկնածուի վարքագծի մասին աննպաստ փաստերը հերքելու փոխարեն «վայնասուն» ու «կական» բարձրացնելը, «հայհոյալից հոդվածներով» պատասխանելը:*

Կաթողիկոսական ընտրությունները ի հայտ բերեցին XX դարի հայ հասարարական կյանքում առկա չափազանց տգեղ ու բացասական երևույթներ: Միայն մեկ հոդվածում՝ «Ձեր անունն են շահագործում» առաջնորդողում, Թումանյանը մատնանշում է արատավոր այդպիսի երեք երևույթ:

Առաջին. *միշտ էլ նախընտրական շրջաններում զանազան բախտախնդիրներ շահագործում են ժողովրդի անունը: «Ինչպես հայտնի է,– գրում է Թումանյանը,– հավաքվում են մի քանի պատահական մարդիկ որոշ գույնի և ուղղության ու խոսում,* վճիռներ են կայացնում ամբողջ համայնքի կողմից»[56]:

Երկրորդ. *ընտրությունների ընթացքին բնորոշ է նաև հանուն բաղձալի նպատակի միանգամայն* հակառակ գաղափարական-քաղաքական և հասարակական հոսանքների ու խմբավորումների արհեստական համախմբումը: *«Կղերական բանակը,– գրում է Թումանյանը,– …ձեռք է մեկնել նույնիսկ իր երեկվա ոխերիմ թշնամիներին, միայն թե կարողանա իր նպատակին հասնել»*[57]*:*

---

[52] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 6, էջ 346:*
[53] *Նույն տեղում, էջ 346:*
[54] *Նույն տեղում:*
[55] *Նույն տեղում:*
[56] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 8, էջ 486:*
[57] *Նույն տեղում, էջ 487:*

Երրորդ. *«ազատամիտների» ու «պահպանողականների» այդպիսի «բլոկները» ասպարեզ էին գալիս* ժողովրդի անունից՝ *նրան խաբելու նպատակով: Անազնիվ միջոցներով ընտրարշավ վարողները փորձում էին* ընտրակաշառք *առաջարկել և գնել ժողովրդից նրա ընտրելու իրավունքը: Թումանյանը կոչ է անում ժողովրդին* չվաճառել իրավունքները *այդպիսի «փողրաղչիներին» և անձամբ մասնակցել պատվիրակների ընտրություններին: Հոկտեմբերի 16-ին՝ պատվիրակների ընտրության օրը, Թումանյանը գրում է. «Միայն մի ցանկություն կարտահայտենք՝ այն, որ ժողովուրդը իր բոլոր խավերով շտապե այսօրվա ընտրություններին և իր ուզած ու ցանկացած մարդկանց ընտրե»*[58]*:*

Նույնիսկ մեծ ցանկության դեպքում Թումանյանը չէր կարող անտարբեր ու զերծ մնալ կաթողիկոսական ընտրապայքարից, քանի որ այդ ամենն ամենաուղղակի ձևով առնչվում էր ինչպես առհասարակ նախընտրական շրջաններին բնորոշ զանազան կեղծիքներին, այնպես էլ այն լրագրի գոյությանը, որի խմբագիրն էր: Խնդիրը վերաբերում էր նաև դաշնակցական կուսակցության, հայ մտավորականության լավագույն մասի և անձամբ իր ճակատագրին: Սակայն Թումանյանը տեսնում էր, որ մշտարթուն է ներքին թշնամու դառնամաղձությունը: Այն շրջանում, երբ ցարական իշխանությունները քաղաքական հալածանք էին սկսել Կովկասում, երբ հարուցվել և ընթացքի մեջ էր «Դաշնակցական գործը», որով դատապարտվում էին հարյուրավոր անմեղ հայորդիներ, երբ նրանց մեծ մասը արդեն բանտարկվել էր մի քանի անգամ և մեղադրվել հակապետական արարքների ու հեղափոխական լինելու մեջ, հանկարծ ռուս պատժարար մեքենային միանում էին հայ որոշ պարբերականներ՝ մատնանշելով կոնկերտ «հեղափոխականների»՝ Թումանյան, Լեո, «Հորիզոնի» ողջ աշխատակազմը:

Ներքին թշնամին «օգնության էր հասնում» արտաքին թշնամուն՝ ջուր լցնելով նրա ջրաղացին: Ինքնակամ մատնիչները բոլորն էլ ժամանակի հասարակական կյանքում նշանավոր ու հռչակ ունեցող, նաև ոչ այնքան անհայտ գործիչներ էին, լրագրողներ, որոնք մերթընդմերթ փորձում էին անանուն մնալ, անվերջ փոխում էին կեղծանունները, քանի որ զգում էին իրենց արարքների դատապարտելիությունը: Սակայն նրանք ունեին կոնկրետ անուններ՝ Հ. Առաքելյան, Ս. Չերքեզյան (Կատոն), Գ. Ենգիբարյան, Ա. Քիշմիշյան (գրաքննիչ - «նախկին ցենզորը»), Ա. Սարուխանյան, Ա. Երիցյան, «Հովիտ», «Սուրհանդակ», «Մշակ» պարբերականների պատասխանատուները, քանի որ այդ նրանց թողտվությամբ և աջակցությամբ էին հրապարակվում այն բոլոր թղթակցությունները, որոնք ցանկացած «գաղտնի գործակալից» ավելի լավ էին կատարում կամովին ստանձնած պահնորդական բաժնի լրտեսի դերը[59]*:*

Գ. Ենգիբարյանը «Հովիտ» շաբաթաթերթում հայտարարում է, որ «Տաճկաստանում ու արտասահմանում» միայն հեղափոխական թերթերն են Օրմանյանի դեմ: Եվ, անշուշտ, Կովկասում հեղափոխական լինելու

---

[58] *Նույն տեղում:*

[59] *Տե՛ս «Մշակ», 29. XII. 1910, «Հովիտ» (Թիֆլիս), 1911, թիվ 4, «Սուրհանդակ», 16. X. 1911:*

մեղքը հասցեագրվում է «Հորիզոնին»[60]*: Իսկ Թումանյանի երդվյալ հակառակորդներից մեկը՝ Ս. Չերքեզյանը, «Սուրհանդակում» գրում է. «Թիֆլիսի ժողովուրդը պիտի լավ գիտենա, որ մեզանում թայֆայական միտումներով առաջնորդվողները, որոնք ջերմորեն սկսել են զբաղվել կաթողիկոսական հարցերով,* ավելի վտանգավոր են իր շահերին, քան անգամ օտար թշնամիները»[61]*: Հեղինակը Թիֆլիսի ոստիկանությանը կամ ցարական պահնորդական բաժնին հիշեցնում է Թումանյանի 1905 թ. գործունեությունը: Հեղափոխական լինելու մեջ լրագրողի հնչեցրած մեղադրանքը բառացիորեն կրկնում էր պաշտոնական այն մեղադրանքը, որով բանտարկվել և պայմանական ազատության մեջ էին մի քանի «հորիզոնականներ», այդ թվում, առաջին հերթին լրագրի խմբագիր Թումանյանը:*

Չերքեզյանը բանաստեղծի կողմից հայ-թուրքական արյունահեղությունը դադարեցնելու գործունեությունը որակում էր «դոնքիշոտական ավանտյուրայով արյան բաղանիքներ» *ստեղծելուն միտված քայլեր: «Հեղափոխական», «դոնքիշոտ. Թումանյանը մարդկային կյանքեր փրկելու համար իր կյանքն էր վտանգել, իսկ, ըստ հոդվածագրի,* Թումանյանը ավելի վտանգավոր էր հայ ժողովրդի համար, քան «օտար թշնամիները»: *Եվ քանի որ խոսքը միայն Թումանյանին չէր վերաբերում, այլ բոլոր նրանց, ովքեր կաթողիկոսական գահի համար պայքարի նախընտրական փուլում հակաօրմանյանական էին, ուստի ո՛չ - Թումանյանը, ո՛չ էլ «Հորիզոնի» շուրջը համախմբված առաջադեմ մտավորականները չէին կարող լռել:*

Հոկտեմբերի 19-ին «Հորիզոնում» լույս է տեսնում Չերքեզյանին ուղղված պատասխանը՝ «Սուտ են ասում» վերնագրով[62]*: «Սուտ են ասում այդ հավիտենական ստախոսները»,– հայտարարում է բանաստեղծը և մեկնում այդ սոսկալի ստի դրդապատճառները՝ ասպարեզից իշխանությունների միջոցով հեռացնել և բանտերը նետել հակաօրմանյանականներին*[63]*: «Այս մարդիկ,– գրում է Թումանյանը,– ամեն կերպ հոգացել էին… իրենց դեմ եղող ամեն մի անհատի ու խմբակցության ներկայացնել հեղափոխական, որ հեռացնեն, հրապարակը մնա իրենց»*[64]*: Եվ հայ բանաստեղծը քաղաքական հալածանքների ամենաթեժ պահին փորձում է հայ լրագրողին, հոգևոր գործչին կամ «մտավորականին» ապացուցել, որ այդ հետապնդումներն արդարացված չեն, որ նույնիսկ «արտաքին թշնամու» շարքերում, Եվրոպայում, Ռուսաստանում կան բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք համոզված են, որ թե՛ Կովկասում, թե՛ Արևմտյան Հայաստանում հայերը չեն ստեղծել «արյան բաղանիքները»: Անշուշտ, Թումանյանը նույնպես, հայ լավագույն մտավորականներին ազատելով «հեղափոխական» լինելու մեղադրանքից, իր պատասխանը գրում էր ոչ այնքան չերքեզյան-կատոնների, որքան այդպիսի հրապարակումներին սևեռուն ուշադրությամբ հետևող ոստիկանության համար: Նա վկայակոչում էր*

---

[60] *«Հովիտ», 16. X. 1911:*

[61] *«Սուրհանդակ», 16. X. 1911:*

[62] *«Հորիզոն», 19. X. 1911: Հոդվածի՝ Հ. Թումանյանի գրչին պատկանելը որոշել է Լուսիկ Կարապետյանը (տե՛ս Լ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 94):*

[63] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, 8, էջ 494:*

[64] *Նույն տեղում, էջ 491:*

օտարների հայանպաստ կարծիքները Կովկասում և արևմտահայ իրականության մեջ արյունահեղություն հրահրողների մասին՝ փորձելով օտար ուժերի և հեղինակությունների միջոցով հային պաշտպանել հայից. «Այս բոլորից հետո մնում է դիմենք և ամբողջ Եվրոպայի վկայությունը բերենք, թե Տաճկաստանում հայերը չեն եղել արյան բաղանիքներ ստեղծողները, կամ ստիպված ենք սենատոր Կուզմինսկու քննությունները բերենք, թե հայերը չեն արյան բաղանիքներ ստեղծել Կովկասում: Եվ այս բոլորը պետք է բերենք հայոց մամուլի դեմ: Եվ կամ աշխարհքը կանչենք հարցնելու՝ թե ինչո՞ւ ով Օրմանյանի դեմ խոսի, հեղափոխական է:

Այս ի՞նչ դիվային ու եզվիտական պայքարի ձև է»[65]*:*

Ընտրություններում «Հորիզոնի» առաջադրած սկզբունքների էությունը հետևյալն էր. «Եկեղեցին կառավարողը պիտի ժողովուրդը լինի… կաթողիկոսը ինչպես և եկեղեցու ամեն մի պաշտոնյա ժողովրդի սպասավորն է»[66]*:*

Ասենք, որ Թումանյանը այդ պայքարում ամենևին էլ հակաօրմանյանական չէր, ինչպես որ նրա խմբագրած թերթը: Մաղաքիա Օրմանյանի դեմ պայքարում էր ոչ միայն «Հորիզոն», այլև հայ հասարակության զգալի մասը: Կ. Պոլսի Ազգային ժողովի մշտական դժգոհությունները նրա գործունեությունից լուսաբանվել էին թիֆլիսահայ մամուլում հաճախ ոչ այնքան անաչառ:

«Հորիզոնի» հակաօրմանյանական դիրքորոշումը հստակ էր և անթաքույց. «…Թեկուզ մի որևէ հրաշքով Օրմանյանն ընտրվի էլ, հայտնի պետք է լինի, որ մենք եղել ենք նրա դեմ»[67]*:*

Հակաօրմանյանականների բանակը ստվարաթիվ էր հատկապես հայ առաջադեմ մտավորականության, գրողների ու արվեստագետների շրջանում: Այսպես, Ղ. Աղայանը «Օրմանյանի պաշտպաններին» վերնագրով հոդվածում գրում է. «Ամբողջ հայությունը՝ սկսած Հնդկաստանից մինչև Եվրոպա ու Ամերիկա, ոտի կկանգնի ու թույլ չի տա, որ Օրմանյանը մտնի Տրդատա դռներով»[68]*:*

«Հովիտ» շաբաթաթերթն անմիջապես Աղայանի այդ միտքը վերաձևակերպեց իբրև Օրմանյանին «տեռորի» ենթարկելու կոչ և նրան անվանեց «մարդասպան»: Կարելի է միայն պատկերացնել, թե ինչպիսին պետք է լիներ Աղայանի վրդովմունքն ու բանավեճի թարմ հետքով գրված պատասխանը: Երբ Աղայանն այն ներկայացնում է իր մտերիմ ընկերոջը, թերթի խմբագիր Թումանյանին, վերջինս մերժում է նրան՝ լրագրական պատշաճ գրելաոճը չպահպանելու համար: Իբրև խմբագիր՝ Թումանյանն իրեն պատասխանատու էր զգում լրագրում տպագրվող յուրաքանչյուր հրապարակման համար և ամեն ինչ անում էր հեղինակներին ուղղորդելու՝ միայն ու միայն պատշաճության և չափավորության սկզբունքներով

---

[65] *Նույն տեղում, էջ 493–494:*

[66] *Նույն տեղում, էջ 485:*

[67] *Նույն տեղում:*

[68] *1911 թ.Ղ. Աղայանի մեկ այլ հոդվածում հանդիպում ենք այսպիսի տողերի. «Ավելի դյուրին է ուղտին ասեղի ծակովն անցնել, քան թե Օրմանյանին Տրդատի դռնով մտնել և բազմել Լուսավորչի գահի վրա».– «Հորիզոն», 31. V.1911:*

առաջնորդվելու հարցում: Հանուն սկզբունքի նա կարող էր մերժել իր մոտիկ բարեկամին, որին, թերևս, բոլոր գրչակից ընկերների մեջ ամենից շատ էր սիրում: «–Օհանեսը թույլ չի տա, որ Ղ. Աղայանի անունն էլ լինի էս անվայել գրության տակը»[69],– ասել է բանաստեղծը: Մի փոքր վերամշակվելուց հետո Աղայանի հոդվածները շարունակվեցին տպագրվել «Հորիզոնում»[70]:

Այդ ընթացքում «Մշակը» շարունակում էր քարոզել Մաղաքիա Օրմանյանի արժանիքները: Սակայն Հ. Առաքելյանը մի կողմից ղեկավարում էր օրմանյանական ընտրարշավը և նախագահում նրանց հավաքներին, մյուս կողմից զայրանում էր, երբ իրեն անվանում էին «օրմանյանական»: Երբ անհրաժեշտ էր համարում, հայտարարում էր, թե Սուրենյանը «Հորիզոնի» թեկնածուն չէ, իսկ հարկ եղած դեպքում պնդում էր միանգամայն հակառակը: «Հորիզոնի» «Դեռ համարձակվում է խոսել և շարունակում է խաբել» առաջնորդողում ասվում է. «Մարդ ակամա ստիպված է բացականչելու. Երանի՜ ոչ թե օրմանյանական, թեկուզ դիվական լինեիր, բայց ոչ այսքան խաբեբա»[71]: Թումանյանը «վերջնական անկում» բնորոշումն է տալիս նախընտրական շրջաններին հատուկ այնպիսի տգեղ երևույթների, ինչպիսիք են հանուն փողի և անձնական կամ խմբակային շահի՝ ժողովրդի անունը շահագործելով՝ գնալ անարժան թեկնածուի ետևից, դիմել անվերջ կեղծիքների ու խաբեությունների, «բարեկամանալ» ոխերիմ թշնամիների հետ և այլն:

Թիֆլիսի վաճառականների զգալի մասը պաշտպանում էր Օրմանյանին: Հայտնի ճշմարտություն է՝ որտեղ կա կապիտալ, այնտեղ կարող են գտնվել և՛ նրան ծառայող լրագրողներ, և՛ լրատվամիջոցներ: Քաղաքի բորսայի նիստերի դահլիճում տեղի ունեցած օրմանյանականների ժողովը նախագահել էր Հ. Առաքելյանը, ով «աջ ձեռքը գցել էլ Օրմանյանի փեշը, իսկ աչքը՝ օրմանյանական վաճառականների գրպանին, միաժամանակ աշխատում էր ձախ ձեռքն էլ գցի Մեսրոպ եպիսկոպոսի փեշը, խաբի և մի կողմին, որի հետ է, և մյուս կողմին, որի հետ չէ, դրա համար էլ ասում ենք, վերջնական անկումը եղավ միաժամանակ և անպատիվ ու խայտառակ. դրա համար էլ արժանի է և՛ մի կողմի արհամարհանքին, և՛ մյուս»[72]: Հ. Առաքելյանը բազմաթիվ փաստեր գլխիվայր շրջում էր հասարակությանն ապակողմնորոշելու համար: Թումանյանը որոշել էր եթե ոչ բոլորը, ապա գոնե «փաստերի» մի մասի անհեթեթությունը բացահայտել ու հերքել դրանք հակափաստարկներով: Դրանցից մեկը վերաբերում էր անձամբ իր հասցեին արված զրպարտություններից մի քանիսին: Առաքելյանը նրան հռչակում էր «սուրենյանական» և դա պայմանավորում էր Սուրենյանի օրոք հոգևոր կոնսիստորիայում նրա ղեկավարությամբ աշխատելու և նրա հետ մտերիմ լինելու հանգամանքով: Բանաստեղծը «Հորիզոնում» հոկտեմբերի 23-ին հայտարարում է. «Սուրենյանի օրով Հովհ. Թումանյանը

---

[69] *Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 193:*

[70] *«Հորիզոն», 11. XII. 1910:*

[71] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, 8, էջ 494-495:*

[72] *«Մշակ», 20. X. 1911:*

երբեք չի եղել կոնսիստորիայում և բնավ նրա հետ մի որևէ առնչություն չի ունեցել»[73]:

«Հորիզոնը» պատվիրակների ընտրությանը թեկնածուներ չէր առաջադրել, Մուրադբեգյանին ընտրելիների շարքում չէր դասել, Պոլիս ցուցակ չէր ուղարկել, Իզմիրլյանն էլ 24.000 ռուբլի պանդուխտների գանձարանից կաշառք չէր տվել պատգամավորներին, ինչպես անվերջ պնդում էր «Մշակը» ՝ Հ. Առաքելյանի ուղղորդումով[74]:

Ըստ Թումանյանի ՝ «տխրահռչակ» Հ. Առաքելյանի ՝ «համազգային ստախոսի» ստերը այնքան վտանգավոր չեն, որքան այդ ամենը և նրա նմաններին հանդուրժող հասարակությունը: «Մարդ կանգնում ու ակամայից հարց է տալիս իրեն,– գրում է Թումանյանը.– ինչո՞ւ և ինչպե՞ս է ապրում մեր մեջ այս զզվելի տիպը: Արդյոք մեր կյանքում գոյության իրավունք ունի՞ սա: Եվ գալիս ենք այն տխուր եզրակացությանը, որ, այո՛, իրավունք ունի, սա մեր կյանքի ապականությունից ծնված հարազատ որդն է, և հասարակությունը, տարիների ընթացքում հասու լինելով բոլոր ստերին, կեղծիքներին, հայհոյանքներին ու զրպարտություններին, ոչ միայն տակավին տանում է նրան, այլ դեռ արտադրում է նրա նման նորերը»[75]: Փաստարկների հիմնավորվածությամբ ու տրամաբանության ուժով Թումանյանն անխոցելի էր դառնում հակառակորդների համար:

Բանաստեղծը կարող էր այդպիսի կրքոտությամբ չարձագանքել կաթողիկոսական ընտրությունների հետ կապված հարցերին, եթե նրան չանհանգստացներ ընտրությունների համար սովորական դարձող կեղծիքի, ստի ու զրպարտության հետ կապված բազմաթիվ փաստերը, քանի որ իրականում նա չեզոք դիրքորոշում ուներ այս հարցում. «Եվ այս երևույթը զարհուրելի է: Եվ սրա համար էր, որ անցյալ հոդվածը վերջացնելով ՝ ասում էինք, թե այս երևույթը մեզ ավելի մեծ մտահոգություն է պատճառում և ավելի լուրջ խնդիր է, քան կաթողիկոսական ընտրությունը[76]:

Նույն շրջանում ՝ 1911 թ. հոկտեմբերին, Ալ. Ծատուրյանին գրած նամակում բանաստեղծը խոստովանում է. «Գալով կաթողիկոսական խնդրին, պետք է ասեմ, որ ինձ այնքան այդ խնդիրը չի զբաղեցնում ու վրդովում, որքան դրա շուրջ տեղի ունեցող տգեղ երևույթները»[77]:

… «Հորիզոնի» դեմ «Մշակի» հարձակումների արձագանքները հասնում էին նաև վրաց պարբերականներին: «Սախալխո գազեթին» 1911 թ. հոկտեմբերյան իր համարներից մեկում հայտարարում է, որ «Հորիզոնը» քաղաքային ընտրությունների վերաբերմամբ շովինիստական հայացք ունի»[78]: Թումանյանը հոկտեմբերի 30-ին հանդես է գալիս «Նորից ու նորից» անստորագիր առաջնորդողով, որտեղ կոչ է անում Թիֆլիսում ապրող ազգերին ավելի լավ ճանաչել մեկմեկու, իսկ այդ գործում կարևորում

---

[73] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, 8, էջ 498:*

[74] *Մատթեոս Իզմիրլյանը ընտրությունների ժամանակ պատվիրակներին էջմիածին ուղարկելու համար ծախսել էր ոչ թե 24. 000, այլ 2. 400 ռուբլի, որը ոչ թե «կաշառք էր», այլ Պոլսից էջմիածին հասնելու ճանապարհածախս (Թումանյան, ԵԼԺ, հ. 8, 661):*

[75] *Նույն տեղում, էջ 499:*

[76] *Նույն տեղում:*

[77] *Թումանյան, ԵԼԺ, հ. 10, էջ 128:*

[78] *Թումանյան, ԵԼԺ, հ. 8, էջ 508:*

է հատկապես մամուլի դերը: Նա վստահեցնում է, որ հակառակ պարագայում վրաց թերթերի «հայկական» բաժիններում կղերականը կհոչակվի ազատամիտ, ստախոսը՝ ամբողջ ազգի «մտածումների ներկայացուցիչ», առաջադեմը՝ խավարամիտ և այլն: «Եվ ինչո՞ւ: Որովհետև վրացական թերթերի դժբախտ «հայկական բաժինը» գրչի աֆերիստների խղճին ու իրավունքին է մնացած»[79]:

Վրաց լրագրի՝ «շովինիզմի մեջ» մեղադրանքի դեմ Թումանյանը պայքարում է մեծ զգուշությամբ, շատ լավ հասկանալով, որ նշված էլույթի հեղինակները ներկայացնում էին վրաց ազգայնական շերտերի տրամադրություններն ու շահերը: Աշխատելով չվնասել հայ-վրացական փխրուն հարաբերությունները՝ Թումանյանը գրում է. «Մենք մեր հարևան թերթի ղեկավարներին ո՛չ անազնվության և ո՛չ էլ միտումնավորության մեջ չենք մեղադրում:

Նրանց հանցանքը անփութությունն է ու անտարբերությունը դեպի հարևան ազգի մտավորական վիճակը»[80]:

Հոկտեմբերի 30-ի այս առաջնորդողը նույն օրը տպագրված հեղինակի ստորագրությունը կրող «Հին խնդիրը» հոդվածի հետ դարձավ Թումանյանի 1911 թ. լրագրական գործունեության վերջակետը: Նա հասարակական ասպարեզից հեռացավ երկար ժամանակով, իսկ խմբագրի պաշտոնին առմիշտ հրաժեշտ տվեց 1911 թ. նոյեմբերի 2-ին՝ իր երկրորդ բանտարկության պատճառով: Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Գևորգ Սուրենյանը (Գևորգ Հինգերորդ), երբ Թումանյանն արդեն բանտում էր:

Հրապարակախոսության ասպարեզը, անվերջ, հաճախ անպտուղ բանավեճերն անարժան հակառակորդների հետ չէին կարող անհետևանք անցնել ստեղծագործող ցանկացած անհատի համար, առավել ևս Թումանյանի՝ երբ բանակռվի հիմքում դրված էր ստի և շարունակական կեղծիքի դեմ պայքարը, երբ հակառակորդը Հ. Առաքելյանն էր՝ իր մտավարժանքներով, անազնիվ ու հարձակողական ոճով հայ հրապարագրության մեջ հայտնի դարձած մի անուն: Այդ մթնոլորտում Թումանյանի համար չափազանց դժվար, գրեթե անհնար էր դառնում ստեղծագործելը. «Սուտ, սուտ, սուտ, կեղծիք, զրպարտություն, հայհոյանք և ամեն տեսակ վատություն:

Դե եկ ու էս տեսակ մթնոլորտում ոգևորվիր ու բանաստեղծություն գրի: Ամոթ էլ է»[81]:

Բնական է, որ լուսավոր նպատակների հակամետ հրապարակախոսը պետք է նախ և առաջ մարտիկ ու զինվոր լիներ, որպեսզի կարողանար ըստ արժանվույն դիմակայել համբարձում առաքելյանների մարտահրավերներին:

Հայրապետական ընտրությունների առիթով Թումանյանի գրած հոդվածները աչքի են ընկնում սեփական իրավացիության այնպիսի հավատով, որ հատուկ է միայն մեծ մտածողներին: Անգամ այն հոդվածները, որոնց գրելու շարժառիթները եղել են անձնական վիրավորանքներն ու հանիրավի հարձակումները, բնորոշվում են խոր ընդհանրացումներով և

[79] *Նույն տեղում, էջ 507:*
[80] *Նույն տեղում, էջ 508:*
[81] *Թումանյան, ԵԼԺ, հ. 10, էջ 128:*

արծարծում են հասարակական հնչեղության ու կարևորության հարցադրումներ: Այդպիսի յուրաքանչյուր հոդվածում նա ապացուցում էր, որ իր վեճը անձնական չէ: Եվ քանի որ Թումանյանն իր տաղանդի ողջ ուժն ու եռանդը, ստեղծագործական կարողություններ-ը 1910–1911 թթ. ներդնում էր հրապարակախոսության ասպարեզում, ապա նրա գրեթե բոլոր ելույթներն ու հոդվածները դառնում են նշանակալից: Թումանյանի հոդվածները հայ հրապարակախոսական մտքի բազմադարյան պատմության նվաճումներից են: Այս ասպարեզում էլ Թումանյանը ժողովրդի ձայնն էր, մոլի պաշտպանը՝ նրա անունից խոսող, այն անվերջ շահարկող ու ժողովրդի շահերը ոտնահարող հասարակական-քաղաքական բոլոր ուժերի դեմ: Իբրև Ամենայն Հայոց Բանաստեղծ՝ Թումանյանը մշտապես կապված էր ազգային կյանքի բուն տարերքի հետ և միշտ արտահայտում էր ժողովրդի ոգին ու ձգտումները, դարավոր կենսափորձն ու արմատական շահերը:

СТРАНИЦЫ ПУБЛИЦИСТИЧЕСКОЙ ДЕЎЯТЕЛЬНОСТИ ТУМАНЯЎНА
(Поэт в эпицентре выборной борьбы и полемики)

СУСАННА ОВАНЕСЯН

Р е з ю м е

Талант Туманяна-публициста в большой степени и многократно проявлялся в текущей культурной, литературной и общественной жизни. Особенно примечательны статьи и публикации поэта, написанные после смерти Католикоса всех армян Маттеоса Измирляна (11 декабря 1910 г.), в период выборов нового католикоса. В них писатель обращался к проблемам церковной жизни, с удивительной точностью и глубиной оценивал особенности и негативные явления, присущие каждой предвыборной борьбе, затрагивал самые актуальные и судьбоносные вопросы своего времени. На страницах тифлисских периодических изданий разгорается ожесточенная борьба. Главным ставленником «Мшака» был Малакия Орманян, а «Оризон» занял четкую антиармянскую позицию и отстаивал кандидатуру Геворка Суреняна. У Туманяна не было предпочитаемого претендента, он просто старался обеспечить равные условия для всех претендентов. Тем не менее, он энергично возглавлял борьбу «Оризона» против реакционных деятелей, сплотившихся вокруг газет «Мшак», «Овит» и «Сурхандак», во главе с Амбарцумом Аракеляном. Статьи, написанные Туманяном по поводу выборов католикоса, отличаются большой убежденностью в своей правоте, что свойственно только крупным мыслителям. Все его выступления этого периода характеризуются глубокими обобщениями и поднимают важные, общественно значимые вопросы, которые и сегодня столь же актуальны, как и в начале минувшего столетия.

PAGES FROM TUMANYAN'S PUBLICISTIC ACTIVITIES
(The poet in the midst of the electoral struggle and controversy)

SUSANNA HOVHANNISSYAN

S u m m a r y

Talent of Tumanyan-publicist heavily and repeatedly manifested in the current cultural, literary and social life. Especially noteworthy are articles and publications of the poet, written after the death of Catholicos of All Armenians Matteos Izmirlyan (11 December 1910), during the election of the new patriarch. In them the writer addressed to the issues of church life, with amazing precision and depth estimated features and negative aspects inherent in each electoral campaign, touched on the most pressing and important issues of his time. In the pages of the Tiflis periodicals inflames bitter struggle. Chief henchman of "Mshak" was Malakia Ormanyan, and "Horizon" had taken a clear anti-Armenian position and championed the candidacy of Gevorg Surenyan. Tumanyan was not the preferred bidder; he simply sought to ensure equal conditions for all applicants. Nevertheless, he energetically led the struggle of "Horizon" against the reactionary leaders, rallied around the newspapers "Mshak", "Hovit" and "Surhandak", headed by Hambartsum Arakelyan. Articles written by Tumanyan on the election of Catholicos are highly self-righteous certitude that is peculiar only to major thinkers. All his performances of this period are characterized by deep generalizations and raise important, socially relevant issues, which are still as topical today as at the beginning of the last century.